**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2/2020**
**21.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2 պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **« 20 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՇՈՏ ԴԱՅԱՆ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 21.12.2015թ. կնքված N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 283,795,785 (երկու հարյուր ութսուներեք միլիոն յոթ հարյուր իննսունհինգ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

**Չափաբաժին 1՝** ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 190,440,705 (մեկ հարյուր իննսուն միլիոն չորս հարյուր քառասուն հազար յոթ հարյուր հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

**Չափաբաժին 2՝** ՀՀ Վայոց ձորի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքների 2020թ կատարման համար 93,355,080 (իննսուներեք միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման Ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման Ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Հաստատել Համաձայնագրի 2020թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները համաձայն հավելված 3-ի:

1.5 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.6 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «ԱՇՈՏ ԴԱՅԱՆ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ ք.Երևան, Թոթվենցի 3/1,բն.1 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ |
| ՀՀ 900011012136 | ՀՀ 247230090257 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 01527332 |
| գլխավոր քարտուղարին փոխարինող | տնօրեն |
| Հ. Բատիկյանի | Ա. Ավետիսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հաստատված է
N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2** գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2/2020** Համաձայնագրով
Հավելված թիվ 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | 2020թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքներ | 40,468,650 | 54,751,703 | 47,610,176 | 47,610,176 | **190,440,705** |
| 2 | ՀՀ Վայոց ձորի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքներ | 19,837,955 | 26,839,586 | 23,338,770 | 23,338,770 | **93,355,080** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՇՈՏ ԴԱՅԱՆ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Թոթվենցի 3/1,բն.1
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 247230090257
ՀՎՀՀ 01527332
տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 2

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքներ | - | 26,979,100 | 26,979,100 | 81,730,803 | 81,730,803 | 81,730,803 | 129,340,979 | 129,340,979 | 129,340,979 | 190,440,705 | 190,440,705 | 190,440,705 | **190,440,705** |
| 2 | ՀՀ Վայոց ձորի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պարսպող համակարգերի մետաղական արգելափակոցների պահպանման աշխատանքներ | - | 13,225,303 | 13,225,303 | 40,064,889 | 40,064,889 | 40,064,889 | 63,403,659 | 63,403,659 | 63,403,659 | 93,355,080 | 93,355,080 | 93,355,080 | **93,355,080** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՇՈՏ ԴԱՅԱՆ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Թոթվենցի 3/1,բն.1
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 247230090257
ՀՎՀՀ 01527332
տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2** գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-2/2020** Համաձայնագրով
Հավելված թիվ 3

**2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները**

**Չափաբաժին 1**

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը գծ.մ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Սիսիան | 33,057 | | | 1.365 | 45122.805 |
| Գորիս | 35,287 | | | 1.365 | 48166.755 |
| Կապան | 28,570 | | | 1.365 | 38998.050 |
| Մեղրի | 42,603 | | | 1.365 | 58153.095 |
| ԸՆԴԱՄԵՆԸ<br>Սյունիքի Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 139517 | | | | 190440.705 |
| Ընդամենը | | | | | 190440.705 |

**Չափաբաժին 2**

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը գծ.մ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Եղեգնաձոր | 38,349 | | | 1.365 | 52346.385 |
| Վայք | 30,043 | | | 1.365 | 41008.695 |
| ԸՆԴԱՄԵՆԸ<br>Վայոց Ձորի Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 68392 | | | | 93355.080 |
| Ընդամենը | | | | | 93355.080 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011012136
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՇՈՏ ԴԱՅԱՆ և ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Թոթվենցի 3/1,բն.1
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 247230090257
ՀՎՀՀ 01527332
տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.